



Համարը N 1210-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2018.11.14/84(1442)
Հոդ. 1160

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը Վարչապետի պաշտոնակատար
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 15.11.2018

Ընդունման ամսաթիվը 01.11.2018
Ստորագրման ամսաթիվը 05.11.2018
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1717-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 նոյեմբերի 2018 թվականի N 1210-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1717-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1717-Ն որոշման N 11 հավելվածի N 11.14 աղյուսակի մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի պաշտոնակատար

Ն. Փաշինյան

2018 թ. նոյեմբերի 5
Երևան

[Հավելված](#)
[ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 1-ի N 1210-Ն որոշման](#)

Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
նոյեմբերի 1-ի N 1210-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1717-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.14 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Չափորոշիչներ | | Ցուցանիշների փոփոխությունները (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | |
|--|------|--|---------------------------|
| | | ոչ ֆինանսական ցուցանիշներ | ֆինանսական ցուցանիշներ |
| | | տարի | տարի |
| ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները | | | |
| 1. Քաղաքականության միջոցառումներ | | | |
| 1.1. Ծառայություններ | | | |
| Ծրագրային դասիչը | | Անվանումը Գյուղական խորհրդատվական ծառայություններ | |
| 1122 | ԱԾ01 | Նկարագրությունը Ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան խորհրդատվության տրամադրում գյուղացիական տնտեսություններին | |

| | | | |
|--|---|------|--|
| Քանակական | Խմբային դասընթաց (հատ) | | |
| | Տեղեկատվական նյութեր (այդ թվում՝ տեսանյութեր և հեռուստահաղորդումներ) (հատ) | (28) | |
| | Ծրագրային դասընթացներ (հատ) | 80 | |
| | Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում տնտեսությունների կողմից ձեռք բերված տեխնիկայի մոնիթորինգ (հատ) | | |
| | Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում, ծրագրային դասընթացներին մասնակցած և վարկ ստացած տնտեսությունների մոնիթորինգ (հատ) | 80 | |
| Որակական | Խմբային դասընթացների առնվազն 3 գնահատած (1-5 բալային համակարգում) մասնակիցների տեսակարար կշիռը խմբային դասընթացների մասնակիցների ընդհանուր թվի մեջ (տոկոս) | | |
| | Ծրագրային դասընթացների առնվազն 3 գնահատած (1-5 բալային համակարգում) մասնակիցների տեսակարար կշիռը ծրագրային դասընթացների մասնակիցների ընդհանուր թվի մեջ (տոկոս) | | |
| Ժամկետայնություն | Մեկ խմբային դասընթացի տևողությունը (առնվազն օր/նվազագույնը ժամ) | | |
| | Մեկ ծրագրային դասընթացի տևողությունը (առնվազն օր/նվազագույնը ժամ) | | |
| Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ) | | X | |
| <u>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1122 Կրթական և խորհրդատվական ծառայությունների ծրագիր</u> | | | |

| |
|---|
| <p><u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u> Գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության տրամադրման արդյունքում՝ տնտեսավարողների գիտելիքների և հմտությունների բարելավում, գործունեության արդյունավետության բարձրացում, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի ավելացում</p> |
| <p><u>Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը (անվանումները)</u> Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ</p> |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ